Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածը՝

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2017 թվականի մայիսի 6-ի «Արարատյան դաշտի ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 413-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) 1-ին կետում «2017-2018» թվերը փոխարինել «2021-2022» թվերով.

2) 2-րդ կետում «2018» թիվը փոխարինել «2022» թվով.

3) 3-րդ կետում «2018» թիվը փոխարինել «2022» թվով.

4) 4-րդ կետում «2017» թիվը փոխարինել «2021» թվով.

5) 5-րդ կետում «2017 թ. 2-րդ և 3-րդ եռամսյակ» բառերը փոխարինել «2018 թ. 2-րդ եռամսյակ» բառերով.

6) 7-րդ կետում «2017 թ. 3-րդ եռամսյակ» բառերը փոխարինել «2017 թ. 4-րդ եռամսյակ» բառերով.

7) 8-րդ կետում «2017» թիվը փոխարինել «2018» թվով.

8) 9-րդ կետում «2017 թ. 3-րդ եռամսյակ» բառերը փոխարինել «2018 թ. 2-րդ եռամսյակ» բառերով.

9) 19-րդ կետում «2018 թ. 2-րդ եռամսյակ» բառերը փոխարինել «2020 թ. 4-րդ եռամսյակ» բառերով.

10) 24-րդ կետում «2018 թ. 1-ին եռամսյակ» բառերը փոխարինել «2019 թ. 1-ին եռամսյակ» բառերով.

11) 26-րդ կետում «2018 թ. 3-րդ եռամսյակ» բառերը փոխարինել «2018-2020 թթ.» բառերով.

12) 27-րդ կետից հետո հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 28-րդ կետով.

«

28. Արարատյան դաշտի ձկնաբուծական տնտեսություններում ավտոմատ, կենտրոնացված կառավարման համակարգի ներդրում	Արարատյան դաշտի ձկնաբուծական տնտեսությունների և խորքային հորերի ջրառի ծավալի հաշվառում	ՀՀ բնապահպանության նախարարություն	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն	2021-2022 թթ.	ՀՀ պետական բյուջե և օրենքով չարգելված այլ միջոցներ	

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: